ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Գնումների հղում՝	TCS 348
Երկիր՝	Հայաստանի Հանրապետություն
Ոլորտ՝	Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածքներ
Ծրագրի համարը.	
Ֆինանսավորման աղբյուր.	Ակնկալվում է, որ նախագիծը կֆինանսավորվի ՎԶԵԲ-ի Տեխնիկական համագործակցության ֆոնդից: Պայմանագրի ստորագրումը կախված է ֆինանսավորման առկայությունից:
Պայմանագրի տեսակ՝	Խորհրդատվական ծառայություններ
Հայտարարության ձև՝	Հետաքրքրությունների արտահայտման հրավեր (ՀՆՀ)
Բացման ամսաթիվ՝	Նոյեմբերի 5, 2014
Փակման ամսաթիվ՝	Դեկտեմբերի 3, 2014, տեղական ժամանակով ժամը 16:00

Հայաստանի ջրային ոլորտի ներդրումային ծրագիր. ՊՄԳ անցումային խորհրդատու

Նախապատմություն

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը («ՎԶԵԲ» կամ «Բանկը») պլանավորում է տրամադրել մինչև 30 մլն եվրոյի սուվերեն վարկ «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերության համար: Բանկի վարկը կհամաֆինանսավորվի Եվրոպական զարգացման բանկի 30 մլն եվրոյի վարկով և միջազգային դոնորի (դոնորների) 20 մլն եվրոյի ներդրումային դրամաշնորհով: Վարկային և դրամաշնորհային միջոցները կօգտագործվեն Հայաստանի տասը մարզերի ջրամատակարարման և երեք մարզերի ջրահեռացման ենթակառուցվածքները վերակառուցելու համար: Դրանք նաև կօգտագործվեն շահագործվող հիմնական միջոցների (ջրաչափեր, հսկողական համակարգեր, պոմպեր) ձեռքբերման համար: Ներդրումները կնվազեցնեն ջրակորուստները, կբարելավեն համակարգի գործունեությունը և կնվազեցնեն գործառնական ծախսերը: Ջրահեռացման համակարգի ներդրումները նշանակալիորեն կնվազեցնեն անսարք վիճակում գտնվող կոյուղու համակարգերի պատճառով աղտոտումը:

ՀՀ կառավարությունը («ՀՀԿ») հատուկ ուշադրություն է դարձնում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բարեփոխումներին: Վերջին տասնամյակում ՀՀ կառավարությունը վերակառուցել է ջրային ոլորտը և որդեգրել ջրային նոր քաղաքականություն: ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն («ՋՏՊԿ») հիմնադրվել է 2002թ.: Կառավարման և վարձակալման պայմանագրեր են կնքվել ջրային մասնավոր օպերատորների հետ, ինչպես նաև կատարվել խոշոր ներդրումներ ջրային ենթակառուցվածքների բարելավման համար: Այս ամենը զգալիորեն բարելավեց

ծառայությունների մատուցումը, գործառնական ծախսերի կրճատումը և եկամուտների բարձրացումը:

Այժմ կան հինգ ջրային ընկերություններ, որոնք կառավարվում են երեք մասնավոր օպերատորների կողմից: ՋՏՊԿ-ն հանձնել է ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների կառավարումը հետևյալ ընկերություններին.

- Երևան ջուր. սպասարկում է մեկ միլիոն բնակչության՝ ըստ Վեոլիա ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրի,
- Հայջրմուղկոյուղի ընկերություն. սպասարկում է 0.62 միլիոն բնակչության՝ ըստ Սաուռ ընկերության հետ կնքված կառավարման պայմանագրի
- Տարածաշրջանային ընկերություններ (Նոր Ակունք, Լոռի և Շիրակ). սպասարկում են 0.32 միլիոն բնակչության՝ ըստ Սաուռ ընկերության գլխավորությամբ (2014թ. հունվարի 1-ից) կոնսորցիումի ընկերությունների՝ ԷՄՎԻՎի դեկոն, ԷՄՎԻՎի էներջի և ԷյԻՋի սերվիզ, կառավարման պայմանագրի:

Այս բոլոր պետական-մասնավոր գործընկերությունների պայմանագրերն ավարտվում են 2016թ. մայիսին և այդ ժամանակ նոր մրցույթներ են հայտարարվելու:

Բացի հինգ խոշոր ջրամատակարարման և ջրահեռացման ընկերությունների սպասարկման տարածքներից, կան մոտ 560 համայնքներ (650.000 բնակչությամբ), որոնք ունեն ջրային համակարգերի կառավարման կազմակերպչական այլ կառուցվածքներ:

Այնուամենայնիվ, դեռ կան մի քանի կարևոր խնդիրներ, որոնք պետք է լուծվեն այս տասնամյակում. (i) սակագների ցածր մակարդակ, որը հանգեցնում է ջրային ընկերությունների ֆինանսական կենսունակության անկմանը և կապիտալ պահպանման և նորոգման համար ցածր ներդրումներին, (ii) ցածր մակարդակի սպասարկում և բարձր ներդրումների պահանջ այն համայքների համար, որոնք ջրային օպերատորների կողմից չեն սպասարկվում, (iii) համակարգերում ջրային կորուստների բարձր մակարդակ, (iv) ռազմավարական պլանավորման պակաս ոլորտում, (v) ջրահեռացման ծառայությունների և իրականացման ցածր ծածկույթ:

ՀՀ կառավարությունը, հետևաբար, սկսում է ջրային ոլորտում «երկրորդ սերնդի» բարեփոխումները: Համաձայնեցված է, որ ընթացիկ վարձակալական և կառավարման պայմանագրերի ավարտից հետո ոլորտի թերությունները պետք է շտկվեն՝ բարելավելով ոչ միայն ջրային կառավարման համակարգը, այլ նաև օրենսդրական և կարգավորիչ դաշտերը՝ հատուկ շեշտ դնելով գյուղական ջրային ոլորտում ինստիտուցիոնալ լուծումների վրա:

Այդ նպատակով կառավարությունը, միջազգային ֆինանսական հաստատությունների (օրինակ՝ Բանկ, Համաշխարհային բանկ, Զարգացման գերմանական բանկ, Ասիական զարգացման բանկ և Եվրոպական ներդրումային բանկ) հետ համագործակցության շրջանակներում, նախաձեռնել է տեխնիկական աջակցման մի քանի նախագծեր ջրային ոլորտում «երկրորդ սերնդի» բարեփոխումները ճիշտ նախագծելու նպատակով: Ջրային ոլորտի

ուսումնասիրությունը, որն աջակցվում է Զարգացման գերմանական բանկի կողմից, օգնել է ՀՀ կառավարությանը ջրային ոլորտի բարեփոխում պատրաստել և գալ հետևյալ հիմնական բացահայտումներին և եզրակացություններին, որոնց հիման վրա կառավարությունը կկայացնի որոշումներ կապված ջրային ոլորտում կառուցվածքային և ֆինանսական երկարաժամկետ կարգավորումների հետ.

Սակագներ. խորհուրդ է տրվում 2016թ. մայիսից հետո առանց պետական սուբսիդավորման գործառնական և պահպանման ծախսերի միասնական ջրային սակագնի կիրառումը: Միևնույն ժամանակ ջրային սակագները կանխատեսվել են մինչև 2033թ.:

Օպերատորներ/սպասարկման տարածքներ. խորհուրդ է տրվում ներգրավել գործող մեկ մասնավոր ընկերություն, որը կսպասարկի բոլոր հինգ ջրային ընկերությունների սպասարկման տարածքները՝ հաշվի առնելով, որ միայն 2016թ. մայիսից հետո մատչելի և միասնական ջրային սակագնի առկայության դեպքում, առանց պետական սուբսիդավորման գործառնական ծախսերի համար, մեկ գործող մասնավոր ընկերության տարբերակը կլինի իրատեսական: Սակայն, կան որոշակի ռիսկեր կապված հաջորդ ՊՄԳ պայմանագրի համար սահմանափակ մրցակցության հետ (շուկայի մուտքի խոչընդոտների հետ կապված): Այս ռիսկերը կարող են նվազեցվել՝ ներառելով համապատասխան դրույթներ ՊՄԳ պայմանագրում և ուժեղացնելով պետության կողմից լիազորված գույքի կառավարչի կարողությունները գույքի կառավարման և ՊՄԳ մոնիտորինգի համար:

Պայմանագրի ձև և պայմանները. խորհուրդ է տրվում վարձակալման պայմանագիր 15 տարվա ժամկետով:

Գնումների ընթացակարգ. Խորհրդատուն պետք է ներկայացնի ամենամատչելի և հարմար ընթացակարգը՝ հիմվելով ներկայիս հարցումների և, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ ուսումնասիրությունների վրա:

Այս գործընթացի գլխավոր շահառուն ՋՏՊՏ-ն է: ՋՏՊԿ-ի հիմնական պարտականություններն են. (i) ոլորտի կառավարման և գործունեության ընդհանուր հսկողություն, (ii) պետական ջրամատակարարման և ջրահեռացման հսկողություն, և (iii) երրորդ կողմի՝ ջրային համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման համար պայմանագրերի կնքում և հսկողություն:

Այլ գլխավոր շահառուները և նախագծի գործընկերներն են Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը:

Առաջադրանքի նկարագրություն.

Ջրային տնտեսության պետական կոմիտեն («ՋՏՊԿ» կամ «Պատվիրատուն») նախատեսում է պայմանագիր կնքել խորհրդատու ընկերության հետ («Խորհրդատու»), որը կաջակցի ՀՀ կառավարությանը Հայաստանում քաղաքային և գյուղական ջրային ենթակառուցվածքների

կայուն զարգացում ապահովելու համար, ինչպես նաև բարձրացնելու ոլորտի աշխատունակությունն ու արդյունավետությունը:

Մասնավորապես Խորհրդատուն. 1. Կմշակի և կաջակցի համապատասխան ՊՄԳ ձևերի կազմավորմանը, ֆինանսավորմանը և իրականացմանը: 2. Կպատրաստի ՊՄԳ կազմակերպման մրցութային փաստաթղթերը, որպեսզի ուղարկվի հայտատուներին: 3. Կաջակցի ՋՏՊԿ-ին մրցույթի ընթացքում և նախապատվություն ստացած հայտատուի հետ բանակցությունների և նրա ընտրության ընթացքում («Հանձնարարությունը»):

Հետևյալ առաջադրանքները պետք է կատարվեն.

- Ջրային ոլորտի ներկա վիճակի վերանայում և, առկայության դեպքում, բարելավման առաջակությունների ներկայացում,
- Բազիսային տարվա հաշվետվության հետ կապված առաջադրանքների կատարում (2014թ. հաշվետություն),
- Ջրային համակարգի օգտագործման թույլտվության նախագծի մշակում,
- ՊՄԳ գնումների ռազմավարության և պլանի մշակում,
- Առաջարկների հրավերի պատրաստում,
- Հայտերի գնահատման չափանիշների պատրաստում, հայտերի գործընթացի պատրաստում,
- ՊՄԳ վարձակալական համաձայնագրի մշակում,
- ՊՄԳ գնումների կառավարում,
- Հայտերի ներկայացման գործընթացի կառավարում,
- Հայտերի գնահատման իրականացում,
- ՊՄԳ համաձայնության բանակցությունների և կառավարման պլանի իրականացում,
- ՊՄԳ համաձայնագրի ստորագրում, ավարտական հաշվետվության և ֆինանսական ամփոփման իրականացում:

Ընտրության գործընթացի կարգավիճակը. հետաքրքրված ընկերությունները կամ ընկերությունների խմբերը այսուհետ հրավիրված են արտահայտել հետաքրքրություն:

Առաջադրանքի մեկնարկի ամսաթիվը և տևողությունը. Առաջադրանքը ակնկալվում է սկսել 2015թ. առաջին եռամսյակում և ընդհանուր հաշվարկված տևողությունը 14 ամիս է:

Առաջադրանքի առավելագույն բյուջեն. 600.000 եվրո (առանց ԱԱՀ):

Խորհրդատուն պետք է որոշի՝ արդյոք կան գանձվելիք որևէ անուղղակի հարկեր/ԱԱՀ առաջարկվող ծառայությունների համար և նշի դրանց հիմնավորումը: Եթե որևէ անուղղակի հարկեր/ԱԱՀ պետք է վճարվի, ապա Պատվիրատուն կվճարի անուղղակի ծառայությունների հարկերը/ԱԱՀ-ն ուղղակիորեն Խորհրդատուին, եթե այլ պայման համաձայնեցված չէ:

Ֆինանսավորման աղբյուր՝ Ակնկալվում է, որ առաջադրանքը կֆինանսավորվի ՎԶԵԲ-ի Տեխնիկական համագործակցության ֆոնդից: Պայմանագրի ստորագրումը կախված է ֆինանսավորման առկայությունից:

Համապատասխանություն սահմանված պահանջներին. Սահմանափակումներ չկան

Խորհրդատուի առաջադրվող պահանջներ՝ Պահանջվում են կորպորատիվ ծառայությունների մատուցում: Խորհրդատուն պետք է լինի ընկերություն կամ ընկերությունների խումբ, որն ունի ջրային ոլորտում ՊՄԳ անցումային և սույն հանձնարարության կատարմանը համապատասխան փորձ:

Առաջարկվում է սույն հանձնարարությունն իրականացնել հետևյալ մասնագետներով.

- Թիմի ղեկավար

  Թիմի ղեկավարը պատասխանատու կլինի նախագծի ընդհանուր պլանավորման և իրականացման համար, ինչպես նաև նախագծին առաջադրված մասնագետների համակարգման և կառավարման համար: Նա կխթանի փորձի և գիտելիքի փոխանակմանը թիմի անդամների միջև, կապ կպահպանի կառավարության համապատասխան մարմինների հետ և կտրամադրի ճշգրիտ և ճշտապահ հաշվետվություններ: Նա պետք է ունենա մագիստրոսի աստիճան համապատասխան ոլորտում և նվազագույնը 10 տարվա մասնագիտական փորձ, ունենա նվազագույնը մեկ փորձ թիմի ղեկավար լինելու ջրային ոլորտում ՊՄԳ ծրագրում: Ակնկալվում է, որ թիմի ղեկավարը իր ներկայությունը Հայաստանում կապահովի նախագծի տևողության 75%-ի ընթացքում: Հայաստանի ջրային ոլորտում նմանատիպ գործընթացների հետ նախկին փորձը կդիտարկվի որպես առավելություն:

- ՊՄԳ մասնագետ

  ՊՄԳ մասնագետը պետք է ունենա գերազանց գիտելիքներ Պետական-մասնավոր գործընկերության պայմանագրերի վերաբերյալ, ՊՄԳ նախագծերի զարգացման կանոնակարգերի վերաբերյալ, ներառյալ իրագործելիության գնահատում, բանակցությունների վարում: Նա պետք է ունենա նվազագույնը մագիստրոսի աստիճան տնտեսագիտության, կառավարման կամ այլ նմանատիպ ոլորտներում և ունենա նվազագույնը 10 տարվա աշխատանքային փորձ: Նա պետք է ունենա նախկին միջազգային փորձ ջրային ոլորտի ՊՄԳ նախագծերում, ներառյալ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շրջաններում: Նախկին ներգրավվածությունը նմանատիպ գործընթացներում Հայաստանում կդիտարկվի որպես առավելություն:

- Ինստիտուցիոնալ մասնագետ

  Մասնագետը պետք է ունենա նվազագույնը մագիստրոսի աստիճան տնտեսագիտության կամ այլ նմանատիպ ոլորտում և առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ, ինչպես նաև խորհրդատվական փորձ ջրային ոլորտի կառուցվածքային զարգացման խնդիրներում, ներառյալ նախկին ներգրավվածություն նմանատիպ գործընթացներում: Նա պետք է ունենա Հայաստանի ջրային ոլորտի կառավարման և ենթակառուցվածքների մասին:

- Իրավական/կարգավորող մասնագետ

  Մասնագետը պետք է ունենա նվազագույնը մագիստրոսի աստիճան տնտեսագիտության կամ այլ նմանատիպ ոլորտում և առնվազն 10 տարվա փորձ ջրային ոլորտում և այլ ենթակառուցվածքներում: Նա պետք է ունենա իրավական և կարգավորման գնահատման ապացուցելի փորձ, ինչպես նաև փորձ պայմանագրերի մշակման, պետական պաշտոնյաների ու ջրային ընկերությունների հետ բանակցություններ վարելու: Նա պետք է ունենա Հայաստանում ջրային ոլորտի օրենսդրության և կարգավորման մասին:

- Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի տեխնիկական մասնագետ

  Ջրային և առողջապահական տեխնիկական մասնագետը պատասխանատու կլինի հանձնարարության տեխնիկական մասերը գնահատելու համար: Նա պետք է ունենա մագիստրոսի աստիճան ճարտարագիտության կամ նմանատիպ ոլորտում և ունենա առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ: ՊՄԳ նախագծերում նմանատիպ պաշտոններ զբաղեցնելու փորձը կդիտարկվի որպես առավելություն:

- Ֆինանսական մասնագետ

  Ֆինանսական մասնագետը կիրագործի ակնկալվող ֆինանսական նախագիծը և կկատարի ՊՄԳ կազմակերպման ֆինանսական վերլուծությունը: Վերլուծությունը կհիմնվի ֆինանսական մոդելների լավագույն փորձի վրա: Մասնագետը պետք է ունենա մագիստրոսի աստիճան տնտեսագիտության, ֆինանսների կամ այլ նմանատիպ ոլորտում և ունենա առնվազն 10 տարվա մասնագիտական փորձ: Ջրային ոլորտում ՊՄԳ նախագծերի պլանավորման և գնահատման փորձը շատ նախընտրելի է նշված պաշտոնի համար:

- Սոցիալ-տնտեսական մասնագետ

  Սոցիալ-տնտեսական մասնագետը պետք է ունենա մագիստրոսի աստիճան և առնվազն 10 տարվա փորձ տնտեսական և սոցիալ-տնտեսական վերլուծությունների ոլորտում: Նա պետք է ունենա լավ գիտելիքներ տվյալների վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծություններ կատարելու, մոդելավորման և կանխատեսման:

Ներկայացման պահանջներ. ընտրվել ցանկացող Խորհրդատուների կարողություններին ու փորձին լավագույնս ծանոթանալու համար ներկայացվելիք տեղեկատվությունը պետք է ներառի հետևյալը.

(ա) Համառոտ ակնարկ ընկերության/ընկերությունների խմբի մասին՝ ներառյալ ընկերության պրոֆիլը, կազմակերպումը և անձնակազմը:

(բ) Մանրամասներ նմանատիպ փորձի մասին, որը կատարվել է ընկերության կամ ընկերությունների խմբի կողմից անցյալ 5 տարվա ընթացքում՝ ներառելով տեղեկատվություն պայմանագրի արժեքի, պատվիրատուի, նախագծի վայրի/երկրի, տևողության (ամիս/տարի – ամիս/տարի), հանձնարարության բյուջեի, խորհրդատուի կողմից իրականացվող մասնաբաժնի (ընկերությունների միանալու կամ ենթապայմանագրի դեպքում), հիմնական գործունեության և նպատակների մասին:

(գ) **Առանցքային մասնագետների** ինքնակենսագրականները, ովքեր հանձնարարության հիմնական որակավորումներն են ներկայացնում, փորձը նմանատիպ նախագծերում, հատկապես նրանք, որոնք կատարվել են նախկին 5 տարիներում, ներառյալ տեղեկատվություն պայմանագրի պատվիրատուի, նախագծի վայրի/երկրի, տևողության (ամիս/տարի – ամիս/տարի), հանձնարարության բյուջեի, հիմնական գործունեության և նպատակների մասին:

(դ) Լրացված կոնտակտային էջը, որի ձևը հասանելի է հետևյալ կայքէջում.

http://www.ebrd.com/pages/workingwithus/procurement/notices/csu/contact_sheet.doc

Հետաքրքրությունների արտահայտման փաստաթուղթը չպետք է գերազանցի 20 էջը (չհաշված ինքնակենսագրականները և կոնտակտային ձևը):

Մեկ բնօրինակ և երկու պատճեն հետաքրքրության արտահայտման փաստաթղթի, մեկն **անգլերեն**, մյուսը **հայերեն կամ ռուսերեն**, պետք է ներկայացնել Պատվիրատուին «EXPRESSION OF INTEREST for Armenia Water Investment Programme – PPP Transaction Advisor» վերնագրով ծրարի մեջ, որը պետք է հասնի Պատվիրատուին ոչ ուշ քան վերը նշված ամսաթիվը և ժամը: Հետաքրքրությունների արտահայտման փաստաթղթերը պետք է ներկայացվեն նաև էլեկտրոնային ձևով մինչև նույն վերջնաժամկետը:

Անգլերեն լեզվով էլեկտրոնային պատճենները (ցանկալի է pdf) նաև պետք է ուղարկվեն Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կոնտակտային անձին մինչև նույն վերջնաժամկետը էլեկտրոնային փոստով (scheffej@ebrd.com):

Կարևոր նկատառումներ.

1. Հետաքրքրության արտահայտման այս հրավերից հետո, կարճ ցուցակում ընտրված որակավորված ընկերությունները պաշտոնապես կհրավիրվեն առաջարկներ ներկայացնելու: Խորհրդատուի ընտրությունը և նրա հետ պայմանագիր կնքելը կապված է ֆինանսավորման առկայության հետ:

2. Ընտրության չափանիշները և համապատասխան կշիռները հետևյալն են.

a) Ընկերության փորձը ՊՄԳ, ցանկալի է ջրային ոլորտի անցումային գործընթացներում՝ 35%
b) Տարածաշրջանում ընկերության աշխատելու փորձը՝ 15%
c) Համապատասխան փորձով առանցքային փորձագետների ինքնակենսագրականների համապատասխանությունը վերոնշյալ չափանիշներին՝ 50%

3. Երկու լրացուցիչ տեխնիկական համագործակցության առաջադրանքներ կիրապարակվեն սահմանված կարգով կապված 1) Հայաստանի ջրային ոլորտի ներդրումային ծրագիր՝ Ծրագրի նախապատրաստում և 2) Հայաստանի ջրային ոլորտի ներդրումային ծրագիր՝ Ծրագրի իրականացման աջակցություն: Ընկերությունները կարող են դիմել բոլոր առաջադրանքներին, սակայն իրավասու կլինեն միայն մեկի շնորհմանը:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Իրականացնող գործակալություն (Պատվիրատու).

ՀՀ տարածքային կառավարման ջրային տնտեսության պետական կոմիտե (ՋՏՊԿ)

Պատվիրատուի կոնտակտային անձ.

Գագիկ Խաչատրյան, նախագահի տեղակալ
Ջրային տնտեսության պետական կոմիտե
Վարդանանց փ. 13ա
0010 Երևան,
Հայաստանի Հանրապետություն

Հեռ. +374 10 54-07-33
Ֆաքս. +374 10 54 06 03
Էլ. փոստ. scwe@scws.am

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կոնտակտային անձ.

Ջեննի Շեֆել
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
Վուան Իքսչեյնջ հրապարակ
Լոնդոն EC2A 2JN
Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն

Հեռ. + 44 20 7338 7088
Ֆաքս. +44 20 7338 7451
Էլ. փոստ. scheffej@ebrd.com